ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2026 թվականի N 147-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱԶՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 42.3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժաշխատողների և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության մասնագետների ներգրավմամբ, ըստ անհրաժեշտության, ստեղծել Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խումբ (այսուհետ՝ ՀՀ ԱԱԲԽ):

2. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խմբի կառուցվածքը և կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խմբի գործունեության համար անհրաժեշտ միջոցների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խմբին Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ներգրավվելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ներգրավվելու դեպքում արտահանել և ներմուծել ՀՀ ԱԱԲԽ-ի գործունեության համար անհրաժեշտ երկակի նշանակության ապրանքները:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) արտակարգ իրավիճակի կամ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված դեպքերում ձևավորել ՀՀ ԱԱԲԽ, հաստատել ՀՀ ԱԱԲԽ-ի անդամների գործառույթները և անհատական կազմը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված համապատասխան թեկնածությունները.

2) ՀՀ ԱԱԲԽ-ի կազմում ընդգրկել հատուկ պատրաստություն անցած (համապատասխան դասընթացների և վարժանքների մասնակցած) անձանց.

3) իրականացնել ՀՀ ԱԱԲԽ-ի ղեկավար կազմի (բացառությամբ նյութատեխնիկական ապահովման կազմի ղեկավարի և անվտանգության աշխատակցի) և կլինիկական կազմի (հիմնական և պահեստային) ընտրությունը.

4) իրականացնել ՀՀ ԱԱԲԽ-ի ընթացիկ աշխատանքների, այդ թվում՝ դասընթացների և վարժանքների պլանավորումը, կազմակերպումն ու համակարգումը.

5) ապահովել ՀՀ ԱԱԲԽ-ի գործունեության համար անհրաժեշտ միջոցների առկայությունը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին.

6) Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցներին, չափորոշիչներին և տեխնիկական չափանիշներին համապատասխան՝ կազմակերպել ՀՀ ԱԱԲԽ-ի նախապատրաստումը, միջազգային հավաստագրման (դասակարգման) համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթի կազմումը և ներկայացումը միջազգային հավաստագրման (դասակարգման):

5. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝

1) սույն որոշմամբ սահմանված դեպքերում իրականացնել ՀՀ ԱԱԲԽ-ի նյութա-տեխնիկական ապահովման կազմի ղեկավարի, անվտանգության աշխատակցի և ՀՀ ԱԱԲԽ-ի նյութատեխնիկական ապահովման կազմի (հիմնական և պահեստային) ընտրությունը և վերջիններիս թեկնածությունների ներկայացումը Հայաստանի Հան-րապետության առողջապահության նախարարություն.

2) ապահովել ՀՀ ԱԱԲԽ-ի կազմում ընդգրկված Հայաստանի Հանրապետու-թյան ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության համապատասխան մասնագետների մասնակցությունը ՀՀ ԱԱԲԽ-ի դասընթացներին և վարժանքներին.

3) ՀՀ ԱԱԲԽ-ի դասընթացները և վարժանքներն անցկացնելու համար, ըստ անհրաժեշտության, տրամադրել համապատասխան դաշտային ուսումնական տեղամասեր Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ուսումնավարժարաններում.

4) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը ցուցաբերել տեսական, տեխնիկական և մեթոդական աջակցություն ՀՀ ԱԱԲԽ-ի նախապատրաստական և ուսուցման, աշխատանքների կազմակերպման, նյութա-տեխնիկական ապահովման գործընթացներում.

5) իրականացնել ՀՀ ԱԱԲԽ-ի նյութատեխնիկական ապահովման միջոցների ընթացիկ սպասարկումը:

6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝

1) նշանակել իրավասու անձ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ՀՀ ԱԱԲԽ-ին ներգրավվելու ուղղությամբ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-թյանը խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.02.2026

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ